ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ-ՏՄԴՀ-ԳՀԽԾՁԲ-24/20

ք. Դիլիջան «31» հոկտեմբերի 2024թ.

Դիլիջանի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԿԱՐՈՇԻՆՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Արշակ Կարապետյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է «Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքում հանրային լողավազանի կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում և կազմում» խորհրդատվական ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 6 950 000 (վեց միլիոն ինը հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը

հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Դիլիջանի համայնքապետարան	«ԿԱՐՈՇԻՆՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ
Ք. Դիլիջան, Մյասնիկյան 55	Ք. Երևան, Վ.Վաղարշյան փ. 24/1, բն. 43
ՀՎՀՀ 07618909	ՀՎՀՀ 00102911
ՀՀ 900402000104	ՀՀ 1150015017217234
ՀՀ ֆինանսների նախարարության	«ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ
գործառնական վարչություն	
Համայնքի ղեկավար Ղ. Սարգսյան	Տնօրեն Ա. Կարապետյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
«31» հոկտեմբերի 2024 թ. կնքված
ՀՀ-ՏՄԴՀ-ԳՀԽՇՁԲ-24/20 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը**
1	71241200	*Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքում հանրային լողավազանի կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում և կազմում*	դրամ	6950000	1	Ք. Դիլիջան	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո մինչև 25.12.2024թ.

Օբյեկտի համառոտ նկարագիրը (փաստացի վիճակը), տեղակայման վայրը	**«Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքում հանրային լողավազանի կառուցում»**
Կատարման ենթակա (նախատեսվող) աշխատանքների համառոտ բնութագիրը	**Նախատեսվում է** - ուսումնասիրել տարածքը և ձեռք բերել օրենսդրությամբ սահմանված կարգով մշակված ինժեներաերկրաբանական հետազննության եզրակացություն (-ներ), - ներկայացնել վերլուծական նյութեր ծախսերի խոշորացված հաշվարկների՝ այլընտրանքային լուծումների, համադրման և նախատեսվող աշխատանքների հիմնավորման համար, - կառուցել լողավազանային շենք՝ 1 հարկից, մոտ 30*18 արտաքին չափերով, - հիմնական և օժանդակ գոտիներ.հիմնական գոտի՝ լողավազանի ավազան՝ ներառյալ շրջանցիկ ուղիներ, օժանդակ գոտի՝ հանդերձարաններ, հանդիսատեսի գոտի, բժշկական հսկողության և սպասարկման գոտի, ջրի նախապատրաստման գոտի, նախապատրաստական պարապմունքների գոտի, այլ տարածքներ (վարչականը և տեխնիկականը ներառյալ), - Կառույցում նախատեսվում է լողավազան՝ ծածկված շինարարական օբյեկտ, որի կազմում ընդգրկվում են տարբեր ջրավազաններ՝ ջրին վարժվելու, լողի հմտություններ ձեռք բերելու, մարզաառողջարարական ծառայություններ մատուցելու, մարզակրթական վարժանքների և մարզական տարբեր միջոցառումներ կազմակերպելու համար, - Նախագծային աշխատանքներ իրականացնելիս առաջնորդվել Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 19.02.2024 թ. թիվ 09-Ն հրամանով սահմանված կարգով / ՀՀՇՆ 31-03.06-2024թ. «Մարզական նշանակության օբյեկտներ. Ծածկված շենքեր և համալիրներ» Հայաստանի Հանրապետության շինարարական նորմերը հաստատելու մասին/: **Նախատեսվում է մշակել նախագծանախահաշվային փաստաթղթեր՝ հետևյալ կազմով.** • Լողավազանի կառուցման նախագիծ, • Այլ ենթակառուցվածքներ ՝ ըստ անհրաժեշտության և տեխնիկական պայմանների: Նախագիծը մշակել ՀՀ գործող օրենքներին և նորմերին համապատասխան:
Նախագծման հիմնավորում և նորմատիվային պահանջներ	**Հիմնավորում՝** ՀՀ վարչապետի հանձնարարականներ, ՀՀ կառավարության որոշումներ, ճարտարապետահատակագծային առաջադրանք, ինժեներական ենթակառուցվածքների տեխնիկական պայմաններ **Նախագծման համար հիմք հանդիսացող փաստաթղթեր՝ ելակետային տվյալներ** - ճարտարապետահատակագծային առաջադրանք (-ներ) և տեխնիկական պայմաններ, - ինժեներաերկրաբանական հետազննության եզրակացություն(-ներ), - նախագծային առաջադրանք (կազմվում է ընտրված Նախագծողի և Պատվիրատուի համատեղ մասնակցությամբ և հաստատմամբ), - ոլորտային (շահագրգիռ) մարմինների եզրակացություններ՝ եթե այդպիսիք անհրաժեշտ են (շրջակա միջավայր, մշակույթ, արտակարգ իրավիճակներ): **Նախագծի մշակում ըստ նորմատիվային պահանջների՝** **Նախագծային փաստաթղթերը մշակելիս անհրաժեշտ է ղեկավարվել, ինչպես նաև հղում կատարել՝** - <Քաղաքաշինության մասին> օրենք -ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերին, -ՀՀՇՆ 20.04-2020 «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր» շինարարական նորմերին, - ՀՀՇՆ 52-01-«Բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաներ» շինարարական նորմերին, -ՀՀՇՆ 31-03-2020 «Հասարակական շենքեր և շինություններ» շինարարական նորմերին, -ՀՀՇՆ 31-03.06-2024 «Մարզական նշանակության օբյեկտներ. Ծածկված շենքեր և համալիրներ» շինարարական նորմերին, - -ՀՀՇՆ 13-03-2022 «Կրող և պատող կոնստրուկցիաներ» շինարարական նորմերին, - ՀՀՇՆ 13-02-2022 «Անվտանգության տեխնիկան շինարարությունում» շինարարական նորմերին, -ՀՀՇՆ IV-11.07.01-2006 «Շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժուն խմբերի համար» շինարարական նորմերին, -ՀՀՇՆ 31-03.02-2022 «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական պաշտպանության պաշտպանական կառույցներ» շինարարական նորմերին -ՀՀՇՆ 31-04-2022 «Տանիքներ և տանիքածածկեր» շինարարական նորմերին, - -ՀՀՇՆ 31-04.05-2023 «Հատակներ» շինարարական նորմերին, -ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն» շինարաբական նորմերին, -ՀՀՇՆ 40-01.02-«Ջրամատակարարում. Արտաքին ցանցեր և կառուցվածքներ» շինարարական նորմերին, -ՀՀՇՆ 40-01.03-2022 «Կոյուղի. Արտաքին ցանցեր և կառուցվածքներ» շինարարական նորմերին, -ՀՀՇՆ IV-12.02.01-2004 «Ջեռուցում, օդափոխում և օդի լավորակում» շինարարական նորմերին, -ՀՀՇՆ 22-03-2017 «Արհեստական և բնական լուսավորում» շինարարական նորմերին, -ՀՀՇՆ 21-01.01-2024 «Շենքերի և շինությունների հակահրդեհային պաշտպանության համակարգեր. Ավտոմատ հրդեհաշիջման և հրդեհային ազդանշանման կայանքներ. Նախագծման նորմեր՝ շինարարական նորմերին, -ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն» շինարարական նորմերին,

	-ՀՀՇՆ 30-02-2022 «Տարածքի բարեկարգում» շինարարական նորմերին, -2020 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության մարզերի համայնքներում (այդ թվում բնակավայրերում) ոչ տարանցիկ, տեղական նշանակության ավտոմոբիլային և ներհամայնքային ճանապարհների ու փողոցների երթևեկելի մասի և մայթերի սալարկման, խճապատման և բարեկարգման աշխատանքների կատարման մեթոդական ուղեցույցը հաստատելու մասին» N105-Ն հրամանին, - ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 11.09.2017թ N128-Ն հրամանին, -ՀՀ կառավարության 19.03.2015թ «ՀՀ կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N596-Ն որոշմանը, - ՀՀ կառավարության 16.02.2006թ «Հաշմանդամների և բնակչության սակավաշարժուն խմբերի համար սոցիալական, տրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքների մատչելիության ապահովման կարգը հաստատելու մասին» N 392-Ն որոշմանը, ՀՀ կառավարության 12.04.2018թ N426-Ն որոշմանը: -Նախագծային փաստաթղթերը մշակելիս անհրաժեշտ է զերծ մնալ ՀՀ տարածքում չգործող կամ ուժը կորցրած նորմատիվ փաստաթղթերի կիրառումից և դա հաշվի առնել նախագծային փաստաթղթերը հաստատելիս: - Անհրաժեշտ է նախագծանախահաշվային փաստաթղթերում ներկայացնել շինարարական աշխատանքներ իրականացնելու համար պահանջվող լիցենզիաները:
Նախագծման փուլերը	**Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը սահմանող կանոնների ապահովում՝** ՀՀ քաղաքաշինության նախարարի 11.09.2017թ N 128-Ն հրամանի համաձայն Նախագծային աշխատանքների իրականացում **«Նախագիծ»** և **«Աշխատանքային փաստաթղթեր»** փուլերով (այդ թվում՝ **Էսքիզային նախագիծ՝** ծավալատարածական և ճարտարապետահատակագծային լուծումները պատվիրատուի և իրավասու մարմնի հետ նախապես համաձայնեցնելու նպատակով)
Նախագծի կազմը	**«Նախագիծ»** և **«Աշխատանքային փաստաթղթեր» փաթեթի լրակազմում ընդգրկվող (մշակվող) փաստաթղթեր** 1. **Ընդհանուր բացատրագիր** 2. **Հողամասի հատակագծային կազմակերպման ուրվագիծ** (կամ հողամասի գլխավոր հատակագիծ) 3. **Ճարտարապետաշինարարական մաս** - Ծավալահատակագծային լուծումներ, մասնագրեր և հանգույցներ - Եռաչափ մոդելավորում (3D) 4. **Կոնստրուկտիվ մաս** - Կոնստրուկտիվ լուծումներ, - կոնստրուկտորական հաշվարկների հաշվետվություն 5. **Ինժեներական** (ներքին և արտաքին) լուծումներ (գծագրական և տեքստային նյութեր՝ այդ թվում մասնագրեր) - Ջրամատակարարման համակարգեր,կապի ցանցեր, տեսահսկում, հակահրդեհային ազդանշանում, հրդեհաշիջում և այլն, - Ինժեներական մասերի հզորությունների հաշվարկների հաշվետվություն 6. Շինմոնտաժային աշխատանքների նախահաշիվ 7. Շինարարության կազմակերպման նախագիծ 8. Շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված միջոցառումներ **Համաձայնեցումներ** *Նախագծի համաձայնեցում* 1. **Համայնքի ղեկավարի,** 2. **ՀՀ ՆԳՆ,** 3. **ՀՀ քաղաքաշինության կոմիտեի,** 4. **ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության,** 5. **ՀՀ առողջապահության նախարարության,** 6. **Ինժեներական ենթակառուցվածքների կողմից,** 7. Ըստ անհրաժեշտության՝ (համայնքի ղեկավարի կողմից տրամադրվող ճարտարապետահատակագծային առաջադրանքի և տարածքի գլխավոր հատակագծով սահմանված պահանջների, տեխնիկատնտեսական հիմնավորման, ինչպես նաև հնարավոր ազդեցության ենթակա տարածքի շրջակա միջավայրի, բնական պայմանների, ռեսուրսների ու դրանց օգտագործման նկարագրի առկայությամբ)՝ **ՀՀ շրջակա միջավայրի նախարարության հետ և այլն:** Նախագծային փաստաթղթերի համաձայնեցման ապահովում բյուջետային գլխավոր կարգադրիչ հանդիսացող մարմնի հետ:
Այլ պահանջներ	***Եզրակացություններ*** Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների համար հատկացված ֆինանսական միջոցների շրջանակներում 1. **Նախագծողի կողմից** ինժեներաերկրաբանական հետազոտության եզրակացությունների ձեռքբերում, ընդ որում ինժեներաերկրաբանական ուսումնասիրությունները պետք է իրականացվեն համաձայն գործող կարգերի և գրունտների լաբորատոր փորձարկման միջոցով **Փորձաքննություններ** 1. օրենսդրությամբ սահմանված կարգով 2. շրջակա միջավայրի վրա ազդեցությունների փորձաքննության ապահովում /համաձայն ՀՀ օրենսդրության/՝ ըստ անհրաժեշտության **Շինարարական նյութերի, պատրաստվածքների (շահագործման) նկատմամբ պահանջներ** - նյութերի, պատրաստվածքների շահագործման առավելագույն ժամկետ, - նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ արտադրված նյութերի, պատրաստվածքների ցանկ, Նախագծում օգտագործվող շինարարական նյութերի, պատրաստվածքների հատկանիշների մանրամասն և սպառիչ նկարագրում-բնութագրում՝ նախագծի մասնագրերում և նախահաշվում՝ նշելով տվյալ ապրանքը բնութագրող հիմնական տեխնիկական ցուցանիշները: **Շինարարական հրապարակի կազմակերպման նկատմամբ** շինարարական արտադրության կազմակերպման նախագծում ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պահանջների ամրագրում. **Մինչև շինարարական աշխատանքների մեկնարկը.** 1. օբյեկտի նախապատրաստումը պետք է նախատեսի ինժեներատեխնիկական անձնակազմի կողմից նախագծային փաստաթղթերի ուսումնասիրություն, շինարարության պայմաններին մանրազնին ծանոթություն, արտահիրապարակային ու ներհիրապարակային նախապատրաստական աշխատանքներ, շենքի կառուցման, ինչպես նաև անմիջական նախապատրաստական փուլի աշխատանքների իրականացման նախագծերի մշակում՝ հաշվի առնելով շրջակա միջավայրի անվտանգության պահանջները: 2. հատուկ, կարևորագույն և եզակի օբյեկտների շինարարության նախապատրաստումը պետք է ընդգրկի հատուկ ծրագրով գործելակարգային դիտարկումների (երկրաշարժաչափական, ջրաերկրաբանական, ջրաբանական, երկրաքիմիական, երկրաբաշխական, մարկշեյդերյան, օդերևութաբանական, լարումաչափական և այլն) կազմակերպման աշխատանքներ, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում փորձարարական հարթակի (տեղամասի), օդերևութաբանական կետերի և չափողական կայանքների ստեղծումը: Հետազոտական աշխատանքների, կոնստրուկցիաների ու կառույցների էլեմենտների փորձարկումների և գործելակարգային դիտարկումների ծրագրերը պետք է մշակվեն շինարարական արտադրության կազմակերպման (ПОС- проект организации строительства) և շինարարական աշխատանքների կատարման (ППР-проект производства работ)

նախագծերին համապատասխան: Շինարարական արտադրության կազմակերպման նախագիծը (ՊՕՀ) մշակվում է նախագծային կազմակերպության կողմից՝ որպես նախագծանախահաշվային փաստաթղթերի լրակազմի մաս: Շինարարական աշխատանքների կատարման նախագիծը (ՊՊՐ) մշակվում է շինաշխատանքների կապալառուի կողմից և համաձայնեցվում պատվիրատուի և նախագծային կազմակերպության հետ:

3. շինարարական հրապարակն անհրաժեշտ է ցանկապատել (պահպանական, պաշտպանական կամ ազդանշանային սարքերի, սարքավորումների, գովազդային վահանակների կիրառմամբ), ստեղծել երկրաբաշխական նշահարման հիմք, կառուցել մոտեցման ճանապարհներ, ձևավորել պահեստային տնտեսություն, նախատեսել շինարարության կարիքների համար անհրաժեշտ ծավալի կենցաղային նշանակության ու կոմունալ տնտեսության՝ ինժեներական ենթակառուցվածքների ժամանակավոր շինություններ (ջրամատակարարման, ջրահեռացման, էլեկտրամատակարարման, ըստ անհրաժեշտության նաև գազամատակարարման ժամանակավոր հաղորդակցուղիներ),

4. հասարակությանն իրազեկելու նպատակով շինարարության համար հատկացված շինհրապարակի ցանկապատի /այդ թվում՝ ճանապարհաշինական աշխատանքների ուղեգծի/ կամ մեկ այլ առավել տեսանելի տեղամասում տեղադրել պատվիրատու և կապալառու կազմակերպությունների տվյալները /անվանում, էլեկտրոնային հասցե, հեռախոսահամար/, ծրագրի անվանման ու նպատակային նշանակության, շինարարական աշխատանքների սկզբի և ավարտի ժամկետների, իսկ ՀՀ պետական բյուջեի (այդ թվում՝ պետությանը տրամադրված վարկային և դրամաշնորհային) միջոցների կամ դրանց ներգրավմամբ և համայնքային բյուջեի միջոցների հաշվին իրականացվող շինարարական աշխատանքների դեպքում նաև շինարարության նախահաշվային արժեքի մասին տեղեկատվություն պարունակող վահանակներ՝ մինչև ավարտված շինարարության փաստագրումը դրանք պահպանելու պայմանով:

5. շինարարությունում զբաղված ինժեներատեխնիկական, սպասարկման և բանվորական ռեսուրսի՝ անձնակազմի համար անհրաժեշտ է նախատեսել կենցաղային սպասարկման շինություններ (օրինակ՝ սանհագույց, բուժկետ, հանգստի սենքեր և այլն),

6. անհրաժեշտ է կազմակերպել շինարարական նյութերի, կոնստրուկցիաների, պատրաստի շինվածքների և սարքավորումների մատակարարման գործընթացին վերաբերող ժամանակավոր ենթակառուցվածքների և մեքենա-մեխանիզմների տեղաբաշխման սխեման, հստակեցնել շահագործման և մատակարարման աշխատանքների ժամանակացույցը,

7. շինարարական աշխատանքները շինություններով և հաղորդակցուղիներով զբաղեցված տարածքներում պետք է իրականացվեն հաշվի առնելով տվյալ բնակավայրում կամ թաղամասում օբյեկտների և շինությունների բավարար կենսապահովումը չխաթարելու պայմանը (էլեկտրամատակարարումը, գազամատակարարումը, ջրամատակարարումը, կապի համակարգերը, ջերմամատակարարումը և կոյուղին, ճանապարհների, մայթերի, հարթակների անվտանգ շահագործումը և այլն),

8. շինարարության համար նախատեսված տարածքում իրականացվում է բուսական ծածկույթի (ծառերի, թփերի, բույսերի և այլն) բների հանում, մաքրում, տարածքում առկա և պահպանման ոչ ենթակա բուսական շերտի առանձնացում արմատներից, տարածքի մաքրում ծառերի բներից և թփերից,

9. ծառահատման և տեղափոխման ոչ ենթակա կանաչ տնկիները անհրաժեշտ է ցանկապատել (ցանցապատել), շինարարական հրապարակի տարածքում առանձին կանգնած ծառերի բները պաշտպանել վնասվածքներից՝ փաթեթավորելով ատաղձափայտով: Առանձին կանգնած թփերն անհրաժեշտ է վերատնկել: Կանաչապատման համար պիտանի ծառերն ու թփերը պետք է վերատնկվեն դրանց համար նախատեսված հատուկ պահպանական գոտում:

10. ծառաթփուտային (ծառաթփային) բուսականության հատումը և արմատների վզիկների և աճող ծառերի բների հողալցումն անհրաժեշտ է իրականացնել միայն նախագծային փաստաթղթերով նախատեսված դեպքերում:

Մինչև շինարարական աշխատանքների մեկնարկը և դրա ողջ ընթացքում

11. շինարարությունում զբաղված ինժեներատեխնիկական, սպասարկման և բանվորական անձնակազմի առողջության ապահովման, ինչպես նաև շրջակա միջավայրի համար պետք է ստեղծվեն անվտանգ ու սանիտարահիգիենիկ պայմաններ, տրամադրվեն անհատական պաշտպանական միջոցներ (հատուկ արտահագուստ, սաղավարտ, կոշիկ և այլն), պետք է իրականացվի աշխատակիցների հրահանգավորում՝ անվտանգության տեխնիկայի կանոնների վերաբերյալ:

Շինարարական աշխատանքների ողջ ընթացքում

12. Անհրաժեշտ է լրացնել աշխատանքների վարման մատյան, կազմել ծածկված աշխատանքների փաստագրման, կարևոր կոնստրուկցիաների ընդունման միջանկյալ (սարքավորումների, համակարգերի, ցանցերի) ու փորձարկման ակտեր, անհրաժեշտության դեպքում ձևակերպել այլ շինարարական նորմերով և կանոններով նախատեսված լրացուցիչ կատարողական փաստաթղթեր:

13. Շինարարական աշխատանքների ողջ ընթացքում՝ պետք է պահպանվեն օդի փոշոտվածության և գազոտվածության կանխարգելման պահանջները: Փոշու արտանետումների կանխարգելման համար շինությունները պետք է առանձնացվեն արտաքին միջավայրից ամբողջ բարձրությամբ անթափանց թաղանթով, չոր եղանակային պայմաններում շինարարական հրապարակը օրվա ընթացքում պարբերաբար պետք է խոնավեցվի ջրի շիթով, հրապարակը պետք է համալրվի հոկման աշխատանքների արդյունքում գոյացած փոշու արտանետումները բացառող սարքերով, տեխնոլոգիաներով, շինարարական նյութերը՝ ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը պետք է պահվեն կամ պահեստավորվեն փակ տարածքներում, ծածկվեն անթափանց թաղանթով, շինարարական հրապարակից դուրս եկող ավտոմեքենաների անվադողերը պետք լվացվեն ջրի շիթով:

14. Ապահովել շինարարական աղբի տեղափոխումը դրանց հեռացման համար հատուկ հատկացված վայրեր և հատուկ սահմանված երթուղով:

15. Տարածքի միկրոկլիմայի բավարար պահանջների ապահովման համար բարեկարգման տարրերի և միջոցառումների ընտրությունը անհրաժեշտ է իրականացնել հաշվի առնելով աշխարհագրական դիրքը, տվյալ քաղաքաշինական միջավայրի կառուցապատման և հատակագծման առանձնահատկությունները, կլիմայական պայմանները, բարեկարգվող տարածքի գործառական նշանակությունը, կլիմայի փոփոխության անբարենպաստ հետևանքների ազդեցությունը և կանխարգելիչ միջոցառումների ապահովման պարտադիր պահանջը:

16. ՀՀ պետական և համայնքային բյուջեների միջոցների հաշվին իրականացվող շինարարական աշխատանքների կատարման ամբողջ ընթացքում շինարարական օբյեկտի տարածքը պետք է համալրել տեսախցիկներով, որոնք շուրջօրյա կտեսանկարահանեն ամբողջ շինարարական հրապարակը:

17. Տեխնիկական հսկողություն իրականացնողների կողմից տեխնիկական վթարների, շինարարական հրապարակում զբաղված ինժեներատեխնիկական, սպասարկման և բանվորական անձնակազմի ու շրջակա միջավայրի (բնապահպանական) անվտանգության ու սանիտարահիգիենիկ պահանջների չապահովման վերաբերյալ պետք է տեղեկացվի ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմին՝ 48 ժամվա ընթացքում:

18. Ղեկավարվել՝

-ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերով,

-ՀՀՇՆ 20.04-2020 «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր» շինարարական նորմերով,

- ՀՀՇՆ 52-01-«Բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաներ» շինարարական նորմերով,

-ՀՀՇՆ 31-03-2020 «Հասարակական շենքեր և շինություններ» շինարարական նորմերով,

-ՀՀՇՆ 31-03.06-2024 «Մարզական նշանակության օբյեկտներ. Ծածկված շենքեր և համալիրներ» շինարարական նորմերով,

- -ՀՀՇՆ 13-03-2022 «Կրող և պատող կոնստրուկցիաներ» շինարարական նորմերով,

- ՀՀՇՆ 13-02-2022 «Անվտանգության տեխնիկան շինարարությունում» շինարարական նորմերով,

-ՀՀՇՆ IV-11.07.01-2006 «Շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժուն խմբերի համար» շինարարական նորմերով,

-ՀՀՇՆ 31-03.02-2022 «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական պաշտպանության պաշտպանական կառույցներ» շինարարական նորմերով,

-ՀՀՇՆ 31-04-2022 «Տանիքներ և տանիքածածկեր» շինարարական նորմերով

-ՀՀՇՆ 31-04.05-2023 «Հատակներ» շինարարական նորմերով,

-ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն» շինարարական նորմերով,

-ՀՀՇՆ 40-01.02-«Ջրամատակարարում. Արտաքին ցանցեր և կառուցվածքներ» շինարարական նորմերով,

-ՀՀՇՆ 40-01.03-2022 «Կոյուղի. Արտաքին ցանցեր և կառուցվածքներ» շինարարական նորմերով,

-ՀՀՇՆ IV-12.02.01-2004 «Ջեռուցում, օդափոխում և օդի լավորակում» շինարարական նորմերով,

-ՀՀՇՆ 22-03-2017 «Արհեստական և բնական լուսավորում» շինարարական նորմերով,

	-ՀՀՇՆ 21-01.01-2024 «Շենքերի և շինությունների հակահրդեհային պաշտպանության համակարգեր. Ավտոմատ հրդեհաշիջման և հրդեհային ազդանշանման կայանքներ. Նախագծման նորմերՁ շինարարական նորմերով, -ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն» շինարարական նորմերով, -ՀՀՇՆ 30-02-2022 «Տարածքի բարեկարգում» շինարարական նորմերով: **ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ** Տեղական արտադրության և Հայաստան ներմուծվող շինանյութերի օգտագործում **ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԻ ԼՐԱԿԱԶՄ** Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում համակարգչային ծրագրով: Նախագծանախահաշվային փաստաթղթերի /տեքստային և գծագրական նյութերի, նախահաշվի/ ամբողջական փաթեթի ներկայացում 4 օրինակ՝ փաստաթղթային և էլեկտրոնային՝ AUTO CAD և PDF, նախահաշիվը՝ EXCEL տարբերակներով, երկլեզու՝ հայերեն և ռուսերեն:
	ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏ (ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ) Աշխատանքների կատարման ժամանակահատվածը նախատեսել պայմանագիրն (համաձայնագիրն) ուժի մեջ մտնելու օրվանից՝ 60 **օրացուցային օր**՝ ըստ կից ներկայացված օրացուցային գրաֆիկի: **ՆԱԽԱԳԾԻ ԼՐԱՄՇԱԿՈՒՄ** Ըստ անհրաժեշտության ***(եթե համալիր (այդ թվում պարզ) փորձաքննության արդյունքներով տրվել է եզրակացություն, հետևյալ ձևակերպմամբ «Նախագիծը վերադարձվում է լրամշակման»),*** նախագծանախահաշվային փաստաթղթերի լրամշակումն իրականացվում է առանց ֆինանսական փոխհատուցման՝ առավելագույնը 10-օրյա ժամկետում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Դիլիջանի համայնքապետարան Ք. Դիլիջան, Մյասնիկյան 55 ՀՎՀՀ 07618909 ՀՀ 900402000104 ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն	«ԿԱՐՈՇԻՆՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ Ք. Երևան, Վ.Վաղարշյան փ. 24/1, բն. 43 ՀՎՀՀ 00102911 ՀՀ 1150015017217234 «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ
Համայնքի ղեկավար Դ. Սարգսյան	Տնօրեն Ա. Կարապետյան
(անդրադարձություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 2
«31» հոկտեմբերի 2024 թ. կնքված
ՀՀ-ՏՄԴՀ-ԳՀԽԾՁԲ-24/20 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2024թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	71241200	*Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքում հանրային լոդվազանի կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում և կազմում*	0	0	0	0	0	0	0	0	0	0	6950000	6950000	6950000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Դիլիջանի համայնքապետարան
Քաղ. Դիլիջան, Մյասնիկյան 55
ՀՎՀՀ 07618909
ՀՀ 900402000104
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն

Համայնքի ղեկավար Գ. Մարգսյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«ԿԱՐՈՇԻՆՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ
Քաղ. Երևան, Վ.Վաղարշյան փ. 24/1, բն. 43
ՀՎՀՀ 00102911
ՀՀ 1150015017217234
«ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ

Տնօրեն Ա. Կարապետյան

(ստորագրություն)

Կ.Տ.